600.0391.09.12.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 դեկտեմբերի 2016 թվականի №391Ա

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը, 2015 թվականի հունիսի 23-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության №ՀՕ-108Ն օրենքի 28-րդ հոդվածը, և հաշվի առնելով «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի նոյեմբերի 30-ի №186-c/11/16/Palr գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝
   1) 2005 թվականի հոկտեմբերի 4-ի «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությանը ջրային համակարգի օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №140Ա որոշումը,
   2) 2006 թվականի հունիսի 21-ի «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության ջրային համակարգի օգտագործման թույլտվության ժամկետը երկարաձգելու մասին» N113Ա որոշումը,
   3) 2010 թվականի նոյեմբերի 10-ի «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությանը ջրային համակարգի օգտագործման N0005 թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու մասին» N611Ա որոշումը,
   4) 2012 թվականի հոկտեմբերի 31-ի «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությանը ջրային համակարգի օգտագործման N0005 թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու մասին» N425Ա որոշումը,

5) 2013 թվականի ապրիլի 30-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հոկտեմբերի 4-ի N140Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N141Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
9 դեկտեմբերի 2016թ.